

Les Oberle, pièce en cinq actes, par. M. Edmond Haraucourt, D'après le roman de M. René Bazin, de l'Académie française.

Այս համարում վերջանում է Ռենէ Բազէնի «Օրերէնէր» վէպի հայերէն թարգմանութիւնը: Էլզասի տրագիկ դրութիւնը, գերմանա-ֆրանսիական յարաբերութիւնները այդտեղ, հին և նոր սերունդի պայքարը այդ հետաքրքրական վայրում, նրա հրաշալի ընտելեան նկարագիրը—աչքի ընկնող տաղանդով է կատարել հեղինակը, որ ֆրանսիական ակադեմիայի անդամ է: Բազէնի այդ վէպը այնքան աչքի ընկնող գործ էր ֆրանսիական գրական կեանքում, որ նշանաւոր Էդմոնդ Հարօկուրը շտապել է «Օրերէնէրը» վերածել դրամայի:

Մենք ստացել ենք «L' Illustration Théâtrale»-ի հրատարակութեամբ, փառաւոր պատկերներով զարդարուած այդ (5 գործ.) դրաման, որի ներկայացումը Պարիզում մեծ զովասանքներով է ընդունել ֆրանսիական կրթիկան: Եթէ մեր իրականութեան պայմանները այնքան ցաւալի չլինէին՝ կարելի էր յանձնարարել մեր թատերասէրներին ուշադրութիւնը այդ նոր պիէսը:

*